ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ

(«1+1» ակցիայի պայմանների և կանոնների վերաբերյալ)

ք. Երևան 06 մարտի 2026 թվականին

1. **Հիմնական հասակցությունները.**

1.1. **Ընկերություն** – «ԷՖ ՆԵԹ» ՍՊ ընկերություն /ՀՎՀՀ՝ 00868357, գրանցման համար՝ 282.110.06506/2009-08-04, գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան, Կենտրոն, Զավարյան Փ., 57/4, էլ. հասցե՝ info@fnet.am/:

1.2. **Կայք** - https://www.fnet.am/:

1.3. **Ակցիա** - Ընկերության կողմից իրականացվող, «1+1» անվանումը կրող միջոցառում, որի շրջանակներում Բաժանորդին և Հրավիրվող բաժանորդին տրամադրվում է ծառայությունների դիմաց Արտոնություն՝ սույն Կանոններով սահմանված պայմաններով:

1.4. **Բաժանորդ** – շահառու ֆիզիկական անձ, որը մինչև Ակցիայի մեկնարկը ունի Ծառայությունների մատուցման կնքված պայմանագիր Ընկերության հետ և չունի վճարային կետանցված պարտավորություններ Ընկերության նկատմամբ:

1.5. **Հրավիրվող բաժանորդ** – շահառու ֆիզիկական անձ, որը Բաժանորդի հրավերով Ընկերության հետ կնքում է Ծառայությունների մատուցման պայմանագիր՝ դառնալով Ընկերության բաժանորդ:

1.6. **Արտոնություն** - Ակցիայի շրջանակներում սահմանված նախապայմանները կատարելու դեպքում Բաժանորդի և Հրավիրվող բաժանորդի նկատմամբ կիրառվող վճարման հատուկ գրաֆիկ, որի համաձայն՝ ծառայությունների մատուցման սկիզբ է համարվում Ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահը, սակայն ծառայությունների դիմաց բաժանորդավճարի հաշվարկման և վճարման ժամանակը սկսվում է ծառայությունների մատուցման երկրորդ հաշվարկային ամսվանից, այսինքն՝ ծառայությունների մատուցմանը հաջորդող 31-րդ օրվանից սկսած: Առաջին 30 օրերը դիտարկվում են որպես ցանցին ինտեգրման և արտոնյալ սպասարկման ժամանակահատված:

1.7. **Ակցիայի գործողության ժամկետ –** 08 մարտի 2026 թվական – 07 ապրիլի 2026 թվական:

1.8. **Կանոններ** - Սույն փաստաթղթով սահմանվող հրապարակային օֆերտան, որը կարգավորում է Ակցիայի կարգն ու պայմանները:

2. **Ակցիային մասնակցության պայմանները և կարգը.**

2.1. Արտոնությունից օգտվելու նպատակով Բաժանորդը Ակցիայի գործողության ժամկետում պարտավոր է մուտք գործել Կայքի համապատասխան բաժին և մուտքագրել ինչպես իր, այնպես էլ Հրավիրվող բաժանորդի հավաստի և գործող նույնականացման տվյալները՝ անունը, ազգանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն, այն հասցեն, որտեղ Բաժանորդին մատուցվում են ծառայություններ, ինչպես նաև Հրավիրվող Բաժանորդի այն հասցեն, որտեղ պետք է հետագայում մատուցվեն Ընկերության ծառայությունները:

2.2. Կայքում հայտի պատշաճ լրացումից հետո Ընկերության աշխատակիցները կապ են հաստատում Հրավիրվող բաժանորդի հետ՝ ծառայությունների միացման տեխնիկական աշխատանքների իրականացման ժամանակացույցը և ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման պահը փոխհամաձայնեցնելու նպատակով: Ընդ որում, Բաժանորդը և Հրավիրվող բաժանորդը օգտվում են Արտոնությունից սկսած այն պահից, երբ Ընկերության և Հրավիրվող բաժանորդի միջև կնքվում է Ծառայությունների մատուցման պայմանագիր և այն փաստացի ակտիվ է:

2.3. Այն բացառիկ դեպքում, երբ Բաժանորդի կողմից Կայքում հայտը լրացվել է Ակցիայի գործողության ժամկետի ընթացքում, սակայն Հրավիրվող բաժանորդի հետ ծառայությունների

մատուցման պայմանագիրը փաստացի կնքվում է Ակցիայի գործողության ժամկետի ավարտից հետո, ապա Ակցիայի պայմանների կիրառման համար որպես հիմք ընդունվում է Կայքում հայտի լրացման ամսաթիվը։

3. <u>Ակցիային մասնակցության սահմանափակումները և բացառությունները.</u>

3.1. Ակցիային չեն կարող մասնակցել հետևյալ անձինք.

3.1.1. Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը,

3.1.2. Այն Բաժանորդները, որոնք Ակցիայի գործողության ժամանակահատվածում կամ հայտի ներկայացման պահին Ընկերության նկատմամբ ունեն կետանցված վճարային պարտավորություն,

3.1.3. Այն Բաժանորդները, որոնց ծառայությունների մատուցումը հայտի ներկայացման պահին ժամանակավորապես կասեցված է,

3.1.4. Այն Հրավիրվող բաժանորդները, որոնց ծառայության մատուցման հասցեում հայտի ներկայացմանը նախորդող 3 /երեք/ ամիսների ընթացքում գործել է Ընկերության հետ կնքված Ծառայությունների մատուցման պայմանագիր։

3.1.5. Ընկերության աշխատակիցները, ինչպես նաև վերջիններիս հետ փոխկապակցված անձինք։

3.2. Ակցիայի պայմանները չեն կիրառվում հետևյալ դեպքերում.

3.2.1. Եթե Հրավիրվող բաժանորդի կողմից նշված հասցեում տեխնիկապես անհնար է կազմակերպել Ընկերության ցանցին միացումը կամ տրամադրել համապատասխան որակի ֆիքսված ծառայություններ։

3.2.2. Եթե Կայքում հայտը լրացվել կամ ներկայացվել է սույն Կանոններով սահմանված Ակցիայի գործողության ժամկետից հետո։

3.3. Ընկերությունն իրավունք ունի իր հայեցողությամբ, առանց նախնական ծանուցման և պատճառաբանության մերժել Ակցիային մասնակցության հայտը կամ չեղարկել արդեն տրամադրված Արտոնությունը, եթե առկա են հիմնավոր կասկածներ կամ ողջամիտ ենթադրություններ, որ Բաժանորդի և/կամ Հրավիրվող բաժանորդի գործողություններում առկա են չարաշահման, խարդախության, ծառայությունների մատուցման պայմանագրի հնարավոր դիտավորյալ լուծման կամ վերակնքման կամ Ընկերությանը վնաս պատճառելուն ուղղված այլ անբարեխիղճ դրսևորումներ։

3.4. Որոշակի կասկածելի դեպքերում Ընկերությունն իրավունք ունի կասեցնել Արտոնության տրամադրման գործընթացը և կողմերից պահանջել անձը հաստատող, ինչպես նաև ծառայությունների մատուցման նոր հասցեի նկատմամբ իրավունքները հավաստող լրացուցիչ փաստաթղթեր։

3.5. Արտոնությունը տրամադրվում է բացառապես անձնական, ընտանեկան կամ կենցաղային կարիքների համար նախատեսված սպառման նպատակով։ Եթե Ընկերության մոտ առաջանան ողջամիտ կասկածներ, որ միացման հասցեում առկա են ձեռնարկատիրական կամ երրորդ անձանց վերավաճառելու/շահագործման հանձնելու օգտագործման փաստեր, ապա Ընկերությունն իրավունք ունի անհապաղ չեղարկել Արտոնության տրամադրումը, կասեցնել ծառայությունների մատուցումը և պահանջել անբարեխիղճ օգտագործման կամ ողջ ժամանակահատվածի համար կոմերցիոն սակագներով վերահաշվարկ։

4. <u>Այլ պայմաններ.</u>

4.1. Արտոնությունը բացառապես վճարման ժամանակացույցի փոփոխություն է և չի հանդիսանում դրամական միջոց կամ գույք։ Արգելվում է Արտոնության դիմաց դրամական փոխհատուցման պահանջը։ Սույն վճարման գրաֆիկը նախատեսված է բացառապես հիմնական սակագնային փաթեթի համար և չի կարող տարածվել այլ լրացուցիչ ծառայությունների վրա, որոնց

դիմաց վճարման պարտավորությունը ծագում է ակտիվացման առաջին իսկ օրվանից՝ ընդհանուր հիմունքներով:

4.2. Բաժանորդը, Կայքում մուտքագրելով Հրավիրվող բաժանորդի անձնական տվյալները, հավաստում և երաշխավորում է, որ ստացել է վերջինիս գիտակցված և հստակ համաձայնությունը՝ իր տվյալները Ընկերությանը փոխանցելու և ծառայությունների մատուցման առաջարկի նպատակով մշակելու վերաբերյալ:

4.3. Մասնակցելով սույն Ակցիային (Կայքում հայտ լրացնելով և/կամ Ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելով)՝ Բաժանորդը և Հրավիրվող բաժանորդը հավաստում են, որ լիարժեք ծանոթացել են սույն Կանոնների պայմաններին, ընդունում են դրանք և տալիս են իրենց անվերապահ համաձայնությունը Կանոնների բոլոր դրույթներին:

4.4. Մասնակցելով սույն Ակցիային (Կայքում հայտ լրացնելով և/կամ Ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելով)՝ Բաժանորդը և Հրավիրվող բաժանորդը տալիս են իրենց անվերապահ համաձայնությունն առ այն, որ Ընկերությունն իրավունք ունի հավաքագրել, պահպանել և մշակել հայտում նշված անձնական տվյալները՝ դրանք օգտագործելով ինչպես սույն Ակցիայի իրագործման և սպասարկման, այնպես էլ Ընկերության կողմից հետագայում կազմակերպվող այլ մարքեթինգային արշավների, գովազդային առաջարկների և տեղեկատվական ծանուցումների նպատակով՝ ՀՀ օրենսդրությամբ չարգելված եղանակներով:

4.5. Ընկերությունը որևէ պատասխանատվություն չի կրում Հրավիրվող բաժանորդների տվյալների ապօրինի կամ առանց համաձայնության մուտքագրման հետևանքով առաջացող իրավական վեճերի համար: Նման դեպքերում պատասխանատվությունը կրում է տվյալները մուտքագրող Բաժանորդը:

4.6. Ընկերությունն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն փոփոխել կամ լրացնել սույն Կանոնները՝ այդ մասին Կայքում կատարելով համապատասխան հրապարակում: Բաժանորդի կամ Հրավիրվող բաժանորդի կողմից Ակցիային մասնակցությունը դիտվում է որպես փոփոխված պայմանների անվերապահ ընդունում: Ակցիայի ժամկետների, պայմանների, դրանցում կատարվող փոփոխությունների կամ Ակցիայի դադարեցման մասին տեղեկատվության հրապարակումը Ընկերության Կայքում կամ Ընկերության պաշտոնական սոցիալական էջերում համարվում է Բաժանորդների և Հրավիրվող բաժանորդների պատշաճ իրազեկում:

4.7. Ընկերությունն իրավունք ունի իր նախաձեռնությամբ ցանկացած ժամանակ դադարեցնել Ակցիայի իրականացումը: Այդ դեպքում Ընկերությունը պարտավորվում է անհապաղ միջոցներ ձեռնարկել Ակցիայի իրականացման վերաբերյալ հրապարակումը և գովազդը դադարեցնելու ուղղությամբ:

4.8. Ընկերությունը երաշխավորում է, որ սույն Ակցիայի իրականացմամբ պայմանավորված մատուցվող ծառայությունների գինը արհեստականորեն չի բարձրացվել՝ դրա մեջ Արտոնության տրամադրման արժեքը ներառելու նպատակով:

4.9. Ակցիայի շրջանակներում ծագած բոլոր վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերման դեպքում վեճերը ենթակա են լուծման Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում:

4.10. Եթե սույն Կանոնների որևէ դրույթ կամ պայման դատական ակտի հիման վրա ճանաչվում է անվավեր, ապա դա չի հանգեցնում սույն Կանոնների մյուս դրույթների անվավերությանը: Անվավեր ճանաչված դրույթը ենթակա է փոխարինման այնպիսի վավեր դրույթով, որն առավելագույնս արտացոլում է Ընկերության սկզբնական նպատակները, օրինական շահերն ու Բաժանորդների և/կամ Հրավիրվող բաժանորդների իրավունքները:

4.11. Սույն Կանոններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությանն ու Ընկերության ներքին իրավական ակտերին համապատասխան: